

Երուսաղէմի մէջ հանգիստ չի տար մերիններուն»: Եզրիազար զայս խմանալուն պէս՝ 1656 Օգոստոս 27ին կ'երթայ Երուսաղէմի Յունաց պատրիարքին, որ այս վէճերուն ասօժիւ Կ. Պոլիս գացած էր, բայց չի գտներ զայն իր տեղը, վասնզի մէկ ժամ առաջ նաւ մը տած էր Երուսաղէմ գառնալու համար: Եզրիազար խօսոյն կը դառնայ Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ու միջոցներ ձեռք կ'առնէ ու կը յաջողի հեռեկալ օրը (28 Օգոստ.) Մարմարայի բացերէն ետ դարձընել տալ Յունաց պատրիարքը տանող նաւը, որ խարխիս կը ձգէ Գուստափուի առջև: Նոյն օրը Եզրիազար Ս. Նիկողայոսի եկեղեցին ժողովի կը կոչէ վեց եկեղեցիներու աւագերէցներն ու իշխանները: Վերջիններս մարդ կը զրկեն Մուղնեցիին, որ ինք ալ զայ ժողովին ու միասին խորհրդակցին: «Ես ի՞նչ պարտք ունիմ, կը պատասխանէ Մուղնեցին, հոգալու Պուզտանի Հայերը»: Ժողովէն ետք Եզրիազար, հեռը առնելով քանի մը քահանաներ ու իշխաններ, կ'երթայ նաև և Յունաց պատրիարքէն բացատրութիւն կը պահանջէ Պուզտանի դէպքերուն մասին: Պատրիարքը անպէտ կը ձեանայ, ու անմիջապէս իր իսկ ձեռքով նաւին վրայ նամակ մը կը խմբագրէ Պուզտանի իշխանին ուղղեալ, յայտնելով թէ Հայոց և Յունաց միջև ուխտի դաշինք մը կնքուած է, որուն համաձայն անոնք խաղաղութեամբ և սիրով կ'ապրին Երուսաղէմի մէջ: Գիրը կը յանձնէ Եզրիազարին ու նաև կը շարունակէ ձամբան: Եզրիազար կը վերագառնայ Ս. Նիկողայոս. կարգալ կու տայ Յունաց պատրիարքին գիրը ու կը զրկէ Պուզտանի պարոնին: Այս խընդիրին մէջ Մուղնեցիի ցոյց տուած անտարբերութիւնը, անկասկած, աղէկ աչքով չի դիտուիր ոմանց կողմէ ու կը նպաստէ համակրութեանց Եզրիազարի կողմը դառնալուն: